# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ՝**

  Ժաննա Արամի Անդրեասյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

  2021 թվականի հոկտեմբերի 27-30-ը Տաջիկստանի Հանրապետություն (Դուշանբե)

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Հումանիտար համագործակցության միջազգային հիմնադրամ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

  Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների և կրթական համակարգի աշխատակիցների 6-րդ համագումարին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

  **Պանելային քննարկումներ.**

- «Բոլոր մակարդակներում մատչելի և որակյալ կրթության ապահովման արդյունավետ ուղիների որոշում. թվայնացումը կրթության մեջ»:
- «Մանկավարժության վիճակը և զարգացման հեռանկարները ԱՊՀ երկրներում»:

- «Նորարարական մոտեցումները ուսուցչի մասնագիտական չափանիշների իրացման գործընթացում և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը ԱՊՀ երկրների կրթական կազմակերպություններում» :
- «Միջազգային հումանիտար համագործակցության ամրապնդման նպատակով ԱՊՀ անդամ երկրների կրթական կազմակերպությունների միջև գործընկերային հարաբերությունների ակտիվացում և զարգացում»:
- «Ռուսաց լեզվի զարգացման, տարածման և պահպանման գործում համագործակցությունը՝ որպես ԱՊՀ անդամ երկրների ինտեգրման կարևորագույն միջոց» :

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

**Առաջին լիագումար նիստ.** «ԱՊՀ կրթական տարածքը՝ որպես նրա կայուն զարգացման ռազմավարական ռեսուրս»:

Առաջին լիագումար նիստին ելույթ է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը: Ելույթում անդրադարձ է կատարվել կրթական համակարգի զարգացման կանխատեսման, կրթական համակարգում հնարավոր ռիսկերի ուսումնասիրության, վերլուծության և կառավարման կարևորության մասին: Ելույթում նշվել է, որ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը մշտապես շահագրգռված է եղել միջպետական համագործակցության և մասնագիտական կապերի ընդլայնման, կրթության ոլորտում տարբեր միջոցառումների անցկացման հարցերում: Անհրաժեշտ է դիտարկել բոլոր հնարավոր ռեսուրսները նորմատիվային փոխճանաչման, մարդասիրական փոխհարստացման և համակողմանի համագործակցության համար, քանի որ ԱՊՀ անդամ պետությունների կյանքի իրական հանգամանքները թելադրում են հարաբերությունների նոր պայմաններ ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ կրթական, մշակութային և այլ ոլորտներում :

«ԱՊՀ կրթական տարածքը՝ որպես նրա կայուն զարգացման ռազմավարական ռեսուրս» խորագրով համագումարին մասնակցել են պետական գերատեսչությունների,

կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ուսուցիչներ ու մանկավարժներ Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից, Տաջիկստանից և Ուզբեկստանից:

- ԿԳՄՄՆ մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն Արաքսիա Սվաջյան -«Բոլոր մակարդակներում մատչելի և որակյալ կրթության ապահովման արդյունավետ ուղիների որոշում. թվայնացումը կրթության մեջ»:
- Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտաշես Թորոսյան -«Մանկավարժության վիճակը և զարգացման հեռանկարները ԱՊՀ երկրներում»:
- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն Արտակ Պողոսյան - «Նորարարական մոտեցումները ուսուցչի մասնագիտական չափանիշների իրացման գործընթացում և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը ԱՊՀ երկրների կրթական կազմակերպություններում»:
- ԿՏԱԿ-ի ներկայացուցիչ Հայկ Դավեյան - «Միջազգային հումանիտար համագործակցության ամրապնդման նպատակով ԱՊՀ անդամ երկրների կրթական կազմակերպությունների միջև գործընկերային հարաբերությունների ակտիվացում և զարգացում» :
- Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոցի տնօրեն Ռաֆայել Բարսեղյան - «Ռուսաց լեզվի զարգացման, տարածման և պահպանման գործում համագործակցությունը՝ որպես ԱՊՀ անդամ երկրների ինտեգրման կարևորագույն միջոց»:

ԱՊՀ անդամ երկրների լավագույն ուսուցիչներին ու մանկավարժներին շնորհվել է «ԱՊՀ կրթության գերազանցություն» կրծքանշան: ՀՀ-ից կրծքանշանի են արժանացել Հրազդանի Խ. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Անահիտ Գրիգորյանը, Վանաձորի Ա. Գրիբայեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատալյա Նալբանդյանը և Նոյեմբերյանի թիվ 2 մանկապարտեզի տնօրեն Փառանձեմ Խանգելդյանը:

«Ուսուցիչ» անվանակարգում Երևանի Թաթուլ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոցի

ուսուցչուհի Անիչկա Մովսիսյանը, «Շիրակացի» ճեմարանի ուսուցչուհի Մարինա Քոչարյանը և Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցիչ Ջավահիր Ստեփանյանը արժանացել են դիպլոմների:

- **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

  Համագումարի արդյունքների ամփոփման նպատակով կազմված «ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների ու կրթական համակարգի աշխատակիցների VI համագումարի» բանաձևի նախագծի քննարկում

- **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

  Համագումարի արդյունքների ամփոփման նպատակով կազմված «ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների ու կրթական համակարգի աշխատակիցների VI համագումարի» բանաձևի նախագծի հանձնում մասնակից կողմերին մինչև նոյեմբերի 5 կազմկոմիտեին էլեկտրոնային տարբերակով առաջարկություն, դիտողություն ներկայացնելու նպատակով:

03.11 .2021թ.

Ժաննա Անդրեասյան

11/3/2021

X

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԺԱՆՆԱ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169